ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

# ՈՐՈՇՈՒՄ N 132

23 դեկտեմբերի 2021 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 (միջնակարգ ընդհանուր կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից 130,0 հազար դրամ որպես համայնքային ներդրում, հատկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Լանջիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ դպրոցի դասասենյակներից մեկը դպրոցի սան, 44-օրյա պատերազմում զոհված հերոս Սամվել Պողոսյանի անունով անվանակոչման գործընթացը կազմակերպելու համար:

2.Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 02, դաս 04 (այլ մշակութային կազմակերպություններ) և տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից 160,0 հազար դրամ հատկացնել Անի համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու անդամների տարեմուտի տոնական միջոցառում անցկացնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ` ...9 | Դեմ` ...0 | Ձեռնպահ` ...0 |
|---|---|---|---|
| Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ | | | |
| Ա. ԱՐՍԵՆՅԱՆ | | | |
| Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ | | | |
| Մ.ՂԱԶԱՐՅԱՆ | | | |
| Գ.ՂԶՐՈՅԱՆ | | | |
| Բ.ՄԵԼԻՔՅԱՆ | | | |
| Ա.ՆԱԶԱՐՅԱՆ | | | |
| Ա. ՆԻԿՈՅԱՆ | | | |
| Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ | | | |
| Վ.ՍԱՀԱԿՅԱՆ | | | |
| Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | | | |
| Զ.ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| Ա.ՎԱՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 23
Քաղաք Մարալիկ